

խելու համար, և քրդական ապստամբութեան 40-րդ օրը կը վախճանի, զուգէ իր զգացած վախէն, մահաւանդ իր ժողովուրդին պարզած աղեխարչ տեսարանէն խղճահարուած:

Ո՛հ Կարնոյ, ո՛հ ալ Երզնկայի տաաջ-նորդարանները բռն մը զիտէին Տէր Սարգիսի կատարած դերին վերաբերմամբ: Միայն իր Հօտին մօտ վերջին ունկամ մեկնելու պոտուն, բռն յուզումի մէջ, աչքերն արցունքով լծայցած, ինծի պատմեց արտօր իրականութիւնը:

Հարուած կոցութիւնը քիչ մը բարւոքած ըլլալով, առաջ որդարանը միջոցներ ձեռք առաւ, քահանայի աղէտաւոր ձեռնարկին հետեանքով, քուրդերու արհամարհանքին նշաւակ Տանձիկցիները փրկելու: զանոնք տեղաւորեց երզնկայի դաշտի հոյ գիւղերուն մէջ: Միւս կողմէն, աղեխարհուած հրապատաններուն, լեւիտայն զիմօւ կատարուեցաւ արկածեալներուն օգնելու, և անոնց զիւզը վերաշինելու պարագային՝ անհրաժեշտ նիւթական օժանդակութիւնն ընձեռելու ատաղաղութեամբ: Դրմբախտարար ունեք ո՛չ մէկ շահագրգռութիւն, ո՛չ մէկ կարեկցութիւն ցոյց տուին իրենց զոհերուն համար, և մինչև վերջ դամբանական լուսթիւնը պոռնցին:

Հ. Բ. Ը. Մ. Հափով մը կերտկրեց դաշտն, և մանուանդ վերտկանդնեց Տանձիկը՝ 18 ումիս յիտոյ ստացուած պետական արտօնութեան վրայ:

Ի լուր Կիլիկիան աղէտի (1909), այս վտարանդի, կիսամերկ, քաղցած և տաաջնորդուած ժողովուրդն էր որ, իր ողբալի կացութիւնը մոռցած, տակաւին իր մօտ մնացած քոտոտ այծը և ժողոտ էշը ծախելով, յանուն Տանձիկցիներու, նուրիկ 18 արծաթ մէճիս՝ զոր մերժեց Կիլիկիան հանդանակիչ յանձնաժողովը, բայց անոնց պընդումներու վրայ ընդունեց զայն՝ արցունքներով փղձկուած իրձակի մէջ: Տանձիկցիներու այս ապնուական մեքը խթանեց սովի ճիւղաններուն ներքե գալարուող ժողովուրդը, որ տուաւ ինպատու Կիլիկիոյ աղէտեալներուն՝ 400 հնչիւն ոսկի:

Այս բանի մը տողերը պարտք զգացի նուրիկ Տանձիկի Տէր Սարգիսին և անոր իսպառ անհետացած փոքրիկ Հօտի յիշատակին:

Յիլիպպի

ԵՐՈՒԱՆԴ ԵՊԻՍԿՈՍՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՔ

Ա.

Ս. ԳՐԻԹԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պէտք ունեցայ ստուգելու կողով, սակաւ և այս կարգի բառերի նշանակութիւնը: Համեմատելով Համարարաւոր կոչումները Յոյն բնագրի հետ, ևս արի մի քանի զիտուչութիւններ, որ յանձնուած և մոտաների ուշադրութեան:

Սակաւ բառը չորս աւետարանների մէջ պատահում է վեց անգամ և բոլոր դէպքերում զբաւած է յուն. *κόφινος* բառի դէմ. իսկ զանրիշ բառը, որ մեր այսօրուան զանրիկն է կամ զանրիւղը, պատահում է չորս անգամ երկու աւետարանի մէջ (Մատթ. և Մարկ.) և չորս դէպքում էլ զբաւած է յուն. *σπυρίς* բառի դէմ: Կարելի է սրանից եզրակացնել, որ չորս աւետարանները միեւնոյն մարդն է թարգմանել, որ միեւնոյն յունարէն բառը միշտ հասկացել է նոյն իմաստով և Հայերէն նոյն բառն է համարժէք նկատել և գործածել:

Բայց անա *κάραλλος* բառը, որ սրբաւայր զամբիւղ է նշանակում և պատահում է Դ. Թագաւորութեանց, Բ. Օրինաց և Երեմիայի մարգարէութեան մէջ: Այս միեւնոյն յունարէն բառը երկ օտարերկրացիների մէջ թարգմանուած է երկ օտարերկրացիների Դ. Թագաւորութեանց մէջ զբաւած է կողով. «և եղին զգլուխս նոցա ի կողովս» (Ժ. 7). Բ. Օրինաց մէջ զբաւած է կողով. «և արկցես ի կողովս». և սոցէ քահանայն զկողովս ի ձեռաց քոց» (ԻԶ. 2, 4). Իսկ Երեմիայի մարգարէութեան մէջ զբաւած է ու. «Ձի այսպէս ասէ Տէր զօրութեանց. կթեցէք, կըթեցէք, ճաքաղ արարէք զմնացորդս Իսրայէլի. և անդրէն կրկնեա՞լիք, որպէս կըթող յո՞ւ իւր»: Եթէ այս երեք զրքերի թարգմանիչը նոյն մարդը լինէր՝ միեւնոյն յունարէն բառը միշտ նոյն իմաստով կը հասկանար և նոյն բառով կը թարգմանէր, ինչպէս արած է Աւետարանների թարգմանիչը: Մենք կարծում ենք, որ միեւնոյն բառի այս տարբեր բմբռնումը և տարբեր համարժէքների կիրարկումը արդիւնք է թարգմանիչների տարբերութեան:

Դաւով կողով և կողովի բառերին՝ կարծում

ենք, որ սրանք նոյն բառերն են, նկատելով որ Փ-ը Պ-ի միջոցով լծորդէ Բ-ին, իսկ սա Վ. և Ի հնչիւններն. այդպէս են գործիականի հոլովակերտ զրբը Ի անձամբ բանիւ, գործով. այդպէս են օրինակ պարսկ. սելաք և գաւառ. սելաւ բառերի վերջին Բ-ն և Ի-ը. երկու բառն ևս նշանակում են հեղեղ: Կողովն և կողովը նոյն բառի գաւառական արտաբերումներն են, ինչպէս օրինակ հոյ և հոյի միջարկութիւնները: Սրանից կարելի է կրակացնել, որ Ե. դաւում բարբառներ կային, ինչ որ ենթադրելի էր և ենթադրած են արդէն. և ապա՝ որ Դ. Թագաւորութեան և Բ. Օրինաց թարգմանիչները ոչ միայն տարբեր անձեր են, այլ և տարբեր գաւառներից են: Միևնոյն առարկային մէկի մայրենի բարբառում ասել են կողովի, միւսի բարբառում՝ կողով և թարգմանիչներին ամեն մէկն իր մայրենի բարբառի հնչումով է զրել միևնոյն բառը նոյն յունարէն բառի դէմ, որ հասկացել են նոյն լատատով և արժէքաւորել նոյն բառով, թէև տարբեր արտաբերութեամբ:

«Մի ծագելով զարուն չի դայ» կը մտածի ընթերցողը: Անշուշտ. բայց մի ծագելը նշան է, թէ զարունը գալիս է. եթէ ուշադիր նայող լինի — գուցէ աւելի շատ ծագիկ գտնի: Դրա համար պէտք է աւելի հասութիւն քան ունիմ, և աւելի ժամանակ: Եթէ առնուի Համարաբարդը և մի շարք այլ կարգի բառեր համեմատութիւն յոյն բնագրի հետ, կարելի է հաստատօրէն գտնել թէ քանի՞ հոգի են եղած թարգմանիչները: Իմ գտածը թող նպատ լինի այդ համբերատար աշխատողին:

Նկատենք նաև, որ Գործք Առաքելոցի մէջ (Թ. 25) կարդում ենք. «և տեսաւ զնա (այսինքն Պօղոսին) աշակերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ»: Վերջին բառը զրուած է յուն. σπυρίς բառի դէմ, որ նշանակում է կլոր հիւսած սակառ կամ կողով, յատկապէս հացի և ձկան համար: Միևնոյն «մանգակ» բառը կիրարկուած է և կորնթ. Բ. թղթի մէջ (ԺԱ. 33). այս անգամ Պօղոսն ինքն է խօսում իր փախուստի մասին. «և ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեալ ի ձեռաց նորա»: Այստեղ «մանգակ» բառը զրուած է յուն.

σπυρίγ բառի դէմ, որ նշանակում է ուռեւ: Նու հիւսած թարմ սոս, ուստի նաև կողով: Պարզ է կարծում եմ, որ Գործքի թարգմանիչը և Աւետարանի թարգմանիչը տարբեր անձեր են, այլապէս միևնոյն յունարէն բառի դէմ մի տեղ չէր դնի «զամբիղ» մի ուրիշ տեղ — «մանգակ»: Նոյնը չենք կարող ասել կորնթ. Բ. թղթի թարգմանիչի մասին. կարող է պատահել, որ հայերէն բառերը բաւական չեն եղած սակառներին բաղադրանութիւնը արտայայտելու համար, ուստի միևնոյն հայերէն բառը զրուած է երկու տարբեր յունարէն բառերի դէմ, որ սակայն մօտաւորապէս նոյն բառն են նշանակել:

Աղեքսանդրիա

Ն. ԱՂԱՅԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՅ ՍԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ

ԴԱՏԵՐԱԲԱՊՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Իրեց ԲՐՅՑ. ԳԵՈՐԳ Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

ԼԱ ՎԵՆՈՆ ԳՈՒԼԵԺ

Ամերիկայի Միացեալ Նահանգները ատիճանական զարգացումով հզոր Հանրապետութիւն մը եղան, ոչ միայն իւր մտական, գիւնուորական, երկրաշինական մարդերու մէջ, այլ նաև մտաւորական ու մշակոյթային ոլորտներու մէջ: Այս յարաճուն թափով զարգացող Հանրապետութիւնը իւր նախնական քայլերուն մէջ հետեւեցաւ մայրերկրին՝ Անգլիոյ՝ ինչպէս նաև Եւրոպայի շարժումներուն. սակայն, վերջին երկու տասնեակ տարիներէ ի վեր թօթափելով հետեոյի դանդաղուն քայլերը, ըսկըսած է կտրել յառաջդիմութեան նոր ճամբայ մը, յաճախ մազլցելով անկոխ ուղիներէ:

Այս եղած է Միացեալ Նահանգներու զարգացման ընթացքը հանրային դաստիարակութեան մարդին մէջ ալ: Անգլիոյ օրինակին հետեւելով իր պատմութեան առաջին շրջանին հիմնած է Լեքին Կրեւոր Սքուլ (Latin Grammar School), որ արդի բարձրագոյն վարժարաններու գերը կը կատարէր: Լատիներէնը ու դաստա-